

գիշերուան խաւարն օգնական առած իրենց, նոյն ճամփով սկսան վերելակէի եւ զանգագոյշ պահապանքը քունի մէջ գտնելով կոտորեցին եւ տիրեցին պարսպին այն կողմին: Կիրակի առաւօտ մ'եր, երբ իրենց գազանային աղաղակը հնչեց ներսէն եւ դուրսէն, յիմար եալ պահապանաց շատերը սուրէ ազատելու համար գահավէժ կը մեռնէին, ոմանք փախստեամբ կ'ազատէին, իսկ կանանց եւ տղայոց բազմութեան լացն ու գոռում-գոչումը անբաւ էր եւ ողորոց արժանի: Երբ թշնամիք բոլորովին տիրացան ամրոցին, պատերազմող մարդիկը կապեցին, իջուցին բերդէն գերիներու եւ անասնոց անհամար բազմութիւնը, եւ տուին ինքզինքնին շուայտութեան՝ ուտելու եւ խմելու: Եւ ահա հասաւ Թեոդորոս իր գնդով եւ դժոխային հանդէսը հազիւ սկսած՝ արեանց հեղեղին մէջ խեղդուեցաւ: Թեպետ թշնամուոյն բազմութիւնը մեծ էր՝ բայց Յայոց զօրավարը ժամանակ չի տուաւ սթափելու. երեք հազար ընտիր սպառազէնք ինկան դիակնացեալ, փախստեից մէկ մասը Ատոմի սուրին բերանը գացին, եւ հազիւ քանի մը հոգի կրցան ազատիլ եւ հասնիլ Ասորեստան: Այս պատերազմին մէջ մեռան իրենց երկու զօրավարքը՝ Օսման եւ Օգմայ:

Գերիներու բազմութիւնն ազատեցաւ, եւ թշնամուոյն աւարեն հարիւր արաբացի նժոյգ յուղարկեց Թեոդորոս Կոստանդին կայսեր՝ ի Կոստանդնուպոլիս:

Թեպետ նոյն միջոցին ուրիշ խումբ մը այս աւազակաց Տայոց, Վրաց եւ Աղուանից կողմը շատ վնաս կը հասցնէր աւար եւ դերի տանելով եւ աւերակաց կոյտեր ձգելով, բայց Թեոդորոսի Արծափայ պատերազմին յաղթութիւնն այնչափ մեծ էր, եւ այնչափ քաջալերիչ, թէ թշնամուոյն կոտորածին, թէ ազատաց գերուոյն բազմութեան եւ այնչափ քիչ զօրքով՝ այնչափ բազմութեան դէմ, որ վնասուն բաւական փոխարինեց եւ միսիթարութիւն համարեցաւ: